# ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«_____» ___________ 2019 թվականի N___- Լ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի «ա» պարբերությունը և «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ օրենքի 1-ին գլխի Կառավարության խնդիրների 13-րդ պարբերությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել՝

1) քաղաքաշինության բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիրը՝ համաձայն N1 հավելվածի,

2) սույն կետի 1-ին կետով հաստատված ռազմավարական ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների ցանկը՝ համաձայն N2 հավելվածի: